



DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA
ԱՌԱՋԵՆՈՐԴՈՒԹԻՒՆ ԼԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ

Archbishop Khajag Barsamian, Primate



Թի 1592
Դեկտեմբեր 23, 1993

Արժանաշնորհ
Տ. Տիրան Ա. Քհնյ. Փափազեան
Հովի Ս. Յովակիմ եւ Աննա Եկեղեցոյ
Փէյրս Հայթց.

Սիրելի Տէր Տիրան,

Մեր ուշադրութեան յանձնուեցաւ՝ 1993 Կիրակի Դեկտեմբեր 5-ի Եկեղեցոյ թերթիկը, ուր քաղաքական կուսակցութեան ձեռնարկի մը յայտարարութիւնը տպուած էր:

Մեզի տեղեկացուեցաւ նաեւ որ, յաւարտ Ս. Պատարագի, հաւատացեալներու հիւրասիրութեան ընթացքին բաժնուած են նոյն ձեռնարկին ծանուցում-թոռոցիկները, որոնք ներկաներէն շատերու արդար վրդովմունք պատճառած են:

Դուք շատ լաւ գիտէք որ մեր եկեղեցիներուն մէջ, ինչպէս նաեւ մեր եկեղեցիներու թերթիկներուն մէջ, որեւէ քաղաքական կուսակցութեան ծանուցումներու եւ յայտարարութիւններու տեղ չի տրուիր:

Մեր թելադրութիւնն է որ այսուհետեւ շատ ուշադիր ըլլա՛ք՝ որպէս զի նման վրիպումներ չպատահին եւ մեր հաւատացեալներու մօտ անտեղի շփոթութիւններ չստեղծուին:

Մօտակայ տօնական օրերուն առթիւ ձեզի եւ ձեր պարագաներուն կը ներկայացնենք մեր լաւագոյն բարեմաղթութիւնները:

Սիրոյ ողջունի

ԽԱԺԱԿ ԱՐԲ. ՊԱՐՍԱՄԵԱՆ
Առաջնորդ